ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տիգրանյան Արմինե Հարությունի

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ՏԵՍԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

**Թ.00.06 «Մշակութաբանություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2025

Ատենախոսության թեման հաստատվել է
ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի նիստում

Գիտական ղեկավար՝	**Համլետ Լենսերի Պետրոսյան** պ.գ.դ., պրոֆեսոր
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	**Թամար Լազարի Հայրապետյան** բ.գ.դ., դոցենտ
	Արսեն Աշոտի Հակոբյան պ.գ.թ., դոցենտ
Առաջատար կազմակերպություն՝	**ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2025 թ. մարտի 20-ին, ժամը՝ 14:00-ին, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲԿԳԿ 007 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ ք. Երևան-0025, Չարենցի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2025 թ. փետրվարի 20-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

պ.գ.թ. Արսեն Էդուարդի Հարությունյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Արցախի Հանրապետության տարածքում պաշտոնապես գրանցվել է ավելի քան 4000 հուշարձան, որոնց մեծ մասը 4-19-րդ դարերի հայկական քրիստոնեական ժառանգություն է: Հայոց դարավոր նյութական և ոչ նյութական մշակույթի ահռելի հետքը ինքնին տարածքի պատմաիրավական պատկանելության անվիճարկելի ցուցիչն է:

Ադրբեջանն իր կազմավորումից ի վեր (1918 թ.) վարել է հակահայ պետական քաղաքականություն: Արցախահայության ինքնության պահպանության իրավունքը մշտապես ոտնահարվել է Ադրբեջանի թե՛ խորհրդային և թե՛ անկախ հանրապետությունների կողմից, իսկ էթնիկ զտման և մշակութային ցեղասպանության բազմաթիվ դրսևորումները, հայության մշակութային ժառանգության հանդեպ բացահայտ անհանդուրժողականությունը, հայկականության հետքերի վերացումը, հայերի բնիկության փաստերի ժխտումը եղել և մնում են Ադրբեջանի պետական քաղաքականության անբաժան մասը:

Առաջնորդվելով տարածաշրջանում հայկական ներկայության ապացույցները ոչնչացնելու ցանկությամբ՝ 2020 թ. 44-օրյա պատերազմի հենց առաջին օրից Ադրբեջանն ընտրեց հայ ժողովրդի պատմական ժառանգությունն իսպառ ոչնչացնելու գործելաոճը: Մարտական ծանր տեխնիկայով բազմիցս անկանոն հրետակոծման ու ռմբակոծման ենթարկվեց Արցախի հայկական մշակութային ժառանգությունը: Իսկ հայկական տարածքների՝ Ադրբեջանի վերահսկողության տակ հայտնվելուց հետո, երբ հակահայկական գործողությունների թիրախում հայտնվեց Արցախի Հանրապետության զգալի մասը, ոչնչացման ենթակա համարվեցին թե՛ Արցախի քրիստոնեական արժեքները (եկեղեցիներ, մատուռներ, խաչքարեր, հայերեն արձանագիր հուշարձաններ), թե՛ պատմական գերեզմանոցները, թե՛ Հայոց ցեղասպանությանը, Հայրենական Մեծ պատերազմին, Արցախյան ազատամարտի հերոսներին նվիրված հուշարձաններն ու հուշահամալիրները, թե՛ վերջին 30 տարիներին կանգնեցված ժամանակակից հուշարձանները և թե՛ ոչ նյութական ժառանգությունը:

2023 թ. սեպտեմբերի 19-ի ռազմական գործողություններով Արցախի ամբողջական հայաթափման ծրագրային քաղաքականության իրականացումից հետո, Ադրբեջանը շարունակեց հայկական մշակութային ժառանգության դեմ հարձակումներն ու բռնայուրացման փորձերը, որոնք այսօր էլ չեն դադարում:

Թվում է, թե միջազգային կանոնակարգերի արդյունավետ գործադրման պարագայում պետք է կանխվեին Ադրբեջանի մշակութասպան գործողությունները, Արցախի մշակութային ժառանգությանը չպիտի հասցվեր այդ ահռելի վնասը: Բայց գործնականում տեսնում ենք, որ Ադրբեջանը շարունակում է ոչնչացնել ու յուրացնել հայկական ժառանգությունը՝ բնաջնջելով հայոց պատմական հետքն Արցախից, իսկ միջազգային մշակութապահպան հանրույթն ի վիճակի չէ կասեցնել այդ հանցագործությունները:

2023 թվականին Արցախի ժողովրդի բռնի տեղահանության հետևանքով շուրջ 120.000 արցախահայ տարանջատվեց իր սոցիալ-մշակութային արժեքներից՝ զրկվելով

պատմական հայրենիքի՝ Արցախի բնության, հուշարձանների, համայնքի և մշակութային լանդշաֆտի հետ կապված գիտելիքը, սովորույթներն ու փորձառությունը իրացնելու, վայելելու, ապագա սերունդներին փոխանցելու հնարավորությունից: Տեղահանությունը՝ որպես համայնքների կազմաքանդման գործընթաց, կասեցրեց Արցախի ժողովրդի մշակութային գործունեությունը՝ քանդելով համայնքների սոցիալական կառուցվածքը, խաթարեց ինքնության շարունակականության բնականոն գործընթացն ու սերնդափոխությունը: Իսկ Արցախի տարածքից և նրա 4000-ից ավելի պատմական հուշարձաններից ժողովրդի բռնի հեռացումը, սեփական ինքնությամբ ապրելու անհնարինությունը անհաղթահարելի մարտահրավերներ ստեղծեցին կենսական նշանակության եկեղեցիների, սրբավայրերի, ուխտատեղիների հետ կապված ծեսերը, ավանդույթները, տոները կենսունակ պահելու գործընթացում: Ավելին՝ տեղահանության բացասական հետևանքները՝ համայնքային կյանքի կազմաքանդումը, բնական մշակութային միջավայրից ու լանդշաֆտից հեռացումը պատճառ դարձան նաև ոչ նյութական ժառանգության բազմաթիվ տարրերի՝ բարբառի, ավանդական ուտեստների, արհեստների, տոների, փառատոների, համայնքային խաղերի, գյուղատնտեսական և կենցաղավարման մշակույթի աստիճանական անհետացման, մշակութային ոչ ֆորմալ կրթության կասեցման. առաջ եկան ինքնության պահպանության համակարգային խնդիրներ:

Արցախի ժառանգության ոչնչացումը միտված է աշխարհի մշակութային բազմազանության աղքատացմանը: Ինչպես նշված է «Զինված բախումների դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» 1954 թ. Հաագայի կոնվենցիայի նախաբանում, յուրաքանչյուր ազգի ժառանգությունը համաշխարհային մշակութային ժառանգության և ողջ մարդկության ինքնության մի մասն է, ուստի որևէ ազգի ժառանգության ոչնչացումով հենց մարդկությունն է զրկվում իր անփոխարինելի արժեքներից:

Ուստի ժառանգության արժևորման, պահպանության և հանրահռչակման խնդիրն ունի համընդհանուր բնույթ և վերաբերում է ողջ մարդկությանը: Իսկ միջազգային հանրույթն իր կոնվենցիաներով, կանոնակարգերով ու հռչակագրերով նպատակ ունի պահպանելու և պաշտպանելու այդ ժառանգությունը, որի անքակտելի մասն է կազմում Արցախի հարուստ և ինքնատիպ մշակույթը: Ավելին՝ համաշխարահային մշակութային ժառանգության խճանկարում Արցախի մշակութային ժառանգությունն ունի միջազգային կանոնակարգերով սահմանված լիարժեք պաշտպանության տեսական և իրավական բոլոր նախահիմքերը:

Բայց հարկ է նշել, որ երբ խոսում ենք Արցախի մշակութային ժառանգության պահպանության խնդիրների մասին, առերեսվում ենք ոչ թե ժառանգության կենսունակության բարձրացման, խթանման կամ արդյունավետ վերականգնման միջոցների հետազոտմանը, այլև մշակութային արժեքների ոչնչացման կանխարգելման, առկա ժառանգությանը սպառնացող վտանգների ուսումնասիրության, դրանց ոչնչացման համակցված հետևանքների և Ադրբեջանի վարած քաղաքականության լայնածավալ ազդեցությունների արձագանքմանը, ինչպես նաև այդ ամենի դատապարտմանն ուղղված միջազգային գործընթացների ուսումնասիրման խնդրին: Պետք է նկատել, որ թեպետ մշակույթի ոչնչացման կանխարգելման խնդիրները լայնորեն քննարկվել են

տեսական, քաղաքական, իրավական ու միջազգային ասպարեզներում, թեև օրենքներ, կոնվենցիաներ են ստեղծվել, բայց մի կողմից՝ ոլորտի բացերը, իսկ մյուս կողմից՝ միջազգային արդյունավետ գործիքակազմի բացակայությունը առիթ են տվել Ադրբեջանին՝ չհարգելու այդ կանոնները:

Ներկա աշխատանքի արդիականությունը պայմանավորված է Ադրբեջանի կողմից Արցախի ոչնչացված ժառանգության փաստաթղթավորման, կիրառվող քաղաքականության ուղղությունների դասակարգման և պաշտպանության միջազգային երաշխիքների որոնման անհրաժեշտությամբ՝ հետագա ոչնչացումը դադարեցնելու համար միջազգային միջամտության ներգրավման և իրազեկման տեսանկյունից: Եվ քանի որ ներկա հետազոտությունը ժառանգության պահպանությունը դիտարկում է ժամանակակից միջազգային գործընթացներին և մարդու իրավունքների սկզբունքների՝ ժառանգության նորօրյա տեսության և միջազգային արդի ընկալումների լայն համատեքստում, ուստի այն կարող է նպաստել ժառանգության ոչնչացման համակցված խնդիրները տեսականորեն գնահատելու գործընթացներին: Բացի այդ՝ անդրադառնալով Արցախի արժեքների ոչնչացման հարցերին՝ ուսումնասիրությունը կարող է նպաստել մարդու իրավունքների և համաշխարհային ժառանգության պահպանման գլոբալ նպատակներին, քանի որ այն արտացոլում է մշակութային ժառանգության պահպանության ճանաչումը՝ որպես մարդու իրավունքների գլոբալ դիսկուրսի հիմնարար ասպեկտ: Ավելին՝ հետազոտությունն ընդգծում է անհատների և համայնքների հիմնարար իրավունքների իրացման անհրաժեշտությունը՝ մուտք գործելու, հաղորդակցվելու իրենց ժառանգության հետ և այն կենսունակ պահելու:

Ադրբեջանի շարունակվող հակահայ գործողությունները խաթարում են ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի և միջազգային ամենատարբեր կառույցների կողմից ընդունված հանդուրժողականության, բազմամշակութայնության, մարդու իրավունքների պահպանության սկզբունքները և դեմ են գնում ժառանգության համամարդկային գաղափարներին ու անձեռնմխելիությանը: Միջազգային և ազգային ամենատարբեր կազմակերպություններն իրենց զեկույցներում և ընթացիկ աշխատանքներում («Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում» ծրագիր, Կովկասի ժառանգության կենտրոն) փաստել են հայկական ժառանգության ոչնչացման շարունակական գործողությունների մասին, որոնց հետևանքները դուրս են գալիս Արցախից և դառնում համամարդկային մարտահրավեր՝ նպաստելով միջազգային անկայունությանը, լարվածության մեծացմանը: Ու թեև սակավաթիվ չեն միջազգային կանոնակարգերը, այնուամենայնիվ Արցախի մշակութային ժառանգության ոչնչացման կանխմանը դրանք դեռ չեն օգնել, ուստի խիստ անհրաժեշտ է խնդիրը ուսումնասիրության ենթարկել ժառանգության արդի տեսությանը համարժեք:

Հետազոտության առարկան և օբյեկտը: Հետազոտության առարկան Արցախի մշակութային ժառանգությունն է, իսկ օբյեկտը՝ մշակութային ժառանգության միջազգային սկզբունքները և պահպանության արդի համակարգը:

Հետազոտության նպատակը: Մեր նպատակն է ուսումնասիրել մշակութային ժառանգության պահպանության տեսական մոտեցնումները, միջազգային փորձը (ժառանգության պահպանությանը միտված միջազգային կոնվենցիաները, հռչա-

կագրերը, կանոնակարգերը, ոլորտի միջազգային կառույցների ընդհանուր քաղաքականությունը, բանաձևերը, որոշումները և այլն), որպեսզի վեր հանենք Արցախի մշակութային ժառանգության պահպանության արդի խնդիրները և գտնենք ժառանգության հնարավոր պաշտպանության մեխանիզմները:

Հետազոտության խնդիրները: Ուսումնասիրության նպատակով պայմանավորված՝ առաջ են գալիս հետևյալ խնդիրները.

- քննել մշակութային ժառանգության պահպանության միջազգային տեսական սկզբունքները, պահպանության հայեցակարգերը, ժառանգության բնորոշումները, իսկության, ամբողջականության, կարևորության և բացառիկության սկզբունքները,
- վերլուծել պատերազմների, խաղաղության ժամանակ, ինչպես նաև բռնազավթված տարածքներում մշակութային արժեքների պաշտպանության միջազգային կանոնակարգերը, ՄԱԿ-ի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի, Եվրոպայի խորհրդի կոնվենցիաները, Հռոմի կանոնադրությունը, ՄԱԿ-ի հռչակագրերը, բանաձևերը, մարդու իրավունքների գծով ներկայացուցչի զեկույցները, միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը,
- քննել մշակութային ժառանգության պահպանության լայն հայեցակարգը և վերջինիս ներքո ներկայացնել նյութական և ոչ նյութական արժեքների պահպանության արդի մոտեցումները,
- պահպանության հայեցակարգային վերլուծության մեջ ներառել մշակութային իրավունքները՝ ընդգծելով ժառանգության պահպանության կարևորությունը որպես մարդու հիմնարար իրավունք,
- բացահայտել Ադրբեջանի կողմից Արցախի ժառանգության ոչնչացման դրդապատճառները, դրանց գործադրման մեխանիզմները, ուղղությունները՝ ներկայացնելով դրանց հետ կապված արցախահայերի իրավունքները,
- փաստագրել Ադրբեջանի կողմից Արցախի նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության ոչնչացումները, արձանագրել թիրախավորման դեպքերը, դասակարգել դրանք ըստ ուղղությունների,
- ժառանգության լայն հայեցակարգի ներքո ներկայացնել Արցախի մշակութային ժառանգության պաշտպանության համակարգային խնդիրները 2020 թվականի պատերազմից հետո՝ դիտարկելով դրանք Ադրբեջանի կողմից հայկական մշակութային ժառանգության ոչնչացման, յուրացման, պղծման, անվանափոխման, արցախահայերի բռնի տեղահանության և ժառանգության վերստեղծման կասեցման համակցված գործընթացներում,
- գնահատել 2020-2023 թվականների հակամարտության և Արցախի շուրջ 120.000 էթնիկ հայերի բռնի տեղահանության ազդեցությունը մշակութային ժառանգության վրա՝ անդրադառնալով հուշարձանների հետ հաղորդակցման արգելքների և ոչ նյութական ավանդույթների կասեցման խնդիրներին,
- բացահայտել Արցախի ժառանգությանը սպառնացող այն մարտահրավերներն ու խնդիրները, որոնք կապված են Արցախի մշակութային համայնքների կազմաքանդման, Արցախի ոչ նյութական մշակութային ժառանգության

(ավանդույթների, բարբառի, մշակութային արտահայտման այլ ձևերի) կորստի, շարունակականության ընդհատման և փոխանցման գործընթացի խաթարման հետ,

- ուսումնասիրել, թե ինչպես մշակույթի իրավունքի հարգման հեռանկարը կարող է ուժեղացնել ժառանգության պահպանման ջանքերն Արցախում՝ կարևորելով ժառանգության տարածքներ «մուտքի» իրավունքը և համայնքի մշակութային կյանքին մասնակցությունը,
- վերլուծել շարունակվող հակամարտությունից առաջացած վնասի և ավերածությունների շրջանակը՝ ներկայացնելով դրանց հետևանքները համաշխարհային մշակութային ժառանգության աղքատացման գլոբալ խնդիրների տեսանկյունից՝ շեշտադրելով նաև համամարդկային սկզբունքների ոտնահարման Ադրբեջանի քաղաքականությունը,
- վեր հանել մշակութային ժառանգության պաշտպանության միջազգային համակարգի և ինստիտուցիոնալ շրջանակների խնդիրները և բացերը՝ Ադրբեջանի կողմից ժառանգության շարունակական ոչնչացման համատեքստում և գնահատել միջազգային հանրության գործողությունների արդյունավետությունը,
- առաջարկել Արցախի մշակութային ժառանգության և արցախահայերի մշակույթի իրավունքի պաշտպանության միջազգային երաշխիքների հնարավորություններ:

Հետազոտության գիտական նորույթը: Աշխատանքի գիտական նորույթը Արցախի մշակութային ժառանգության պաշտպանության դիտարկումն է մշակութային ժառանգության լայն հայեցակարգի համապարփակ շրջանակի ներքո, երբ պահպանության գործընթացին համակցվում է մշակույթի իրավունքի մոտեցումը՝ պաշտպանության քաղաքականության տիրույթում նյութական հուշարձաններից զատ կարևորելով նաև մարդու իրավունքների խթանման քաղաքականությանը: Մշակույթի իրավունքի խախտումների համատեքստում հարցի քննությունը գիտական միջավայրում նոր մոտեցում է և կարող է լրացնել Արցախի մշակութային ժառանգության պաշտպանության համակարգը, քանի որ փորձում է նյութական արժեքների պաշտպանության առանցքը կապել մարդկանց իրավունքների հետ՝ իրենց ժառանգության տարածքներ միջազգային երաշխավորությամբ մուտք ունենալու հնարավորության համար: Այս ուսումնասիրությունը ընդլայնում է մշակութային ժառանգության հետազոտության ավանդական շրջանակը՝ ներառելով ինչպես նյութական և ոչ նյութական, այնպես էլ համայնական մշակութային ինքնության ընդհանուր կոնցեպտը:

Հաջորդ գիտական նորույթը մշակութային ժառանգության ոչնչացումները, պատերազմական հանցագործությունները, մշակութային ցեղասպանությունը, էթնիկ զտումները և տեղահանությունը որպես մեկ համակարգ դիտարկելն է՝ անդրադառնալով նաև Արցախի ոչ նյութական ժառանգության կարևոր տարրերի փաստագրմանը տեղահանությունից հետո: Աշխատանքը ոչ միայն ընդգծում է այդ արժեքների բնույթն ու կարևորությունը, այլև դրանց կորուստն ու վերստեղծման խոչընդոտները փոխկապակցում տեղահանության և պատերազմական այլ

հանցագործությունների հետ՝ բացահայտելով ինքնությանը հասցված համակողմանի վնասները:

Ատենախոսությունը փորձում է մշակութային ժառանգության պաշտպանության խնդիրները դիտարկել նաև շարունակվող հակամարտության և քաղաքական անկայունության համատեքստում՝ ժառանգության հանդեպ հարգանքը կապելով խաղաղության հաստատման հետ, իսկ դրա շարունակական ոչնչացումը ներկայացնելով որպես դրա խաթարում, շարունակվող պատերազմ: Ավելին՝ կենտրոնանալով Արցախի մշակութային ժառանգության պահպանության վրա, ատենախոսությունը նպաստում է մշակութային ժառանգության վերաբերյալ միջազգային դիսկուրսի հարստացմանը:

Հետազոտության տեսական հիմքն ու մեթոդաբանությունը: Ուսումնասիրությունը կատարվել է մի քանի մեթոդների համադրմամբ: Կիրառվել են վերլուծական, համադրական և նկարագրական, որակական և քանակական մեթոդները և դաշտային աշխատանքները: Տեսական գրականության քննությամբ փորձել ենք ստեղծել մշակութային ժառանգության և նրա առջև ծառացած մարտահրավերների լուծման տեսական շրջանակ, որը գործնական կիրառման դեպքում կարող է պաշտպանել Արցախի արժեքները և դատապարտել դրանց հանդեպ ոտնձգությունները:

Ակադեմիական հոդվածների, գրքերի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի, ՄԱԿ-ի, ԻԿՕՄՕՍ-ի, Եվրոպայի խորհրդի, Եվրոպական խորհրդարանի բանաձևերի, Հռոմի կանոնադրության, համապատասխան տեսական և իրավական փաստաթղթերի ուսումնասիրությունը հնարավորություն են տալիս գտնելու Արցախի մշակութային ժառանգության պաշտպանության առանձնահատուկ ուղիները՝ ժառանգության համամարդկային արժեքների պահպանութան կարևորության, անկախ քաղաքական իրավիճակից միջազգային հումանիտար իրավունքի գործարկման, մշակույթի իրավունքի հարգման համատեքստում: Կատարվել է նաև հակամարտությունների ազդեցության և մշակութային իրավունքների վերաբերյալ գրականության ուսումնասիրություն. կենտրոնացել ենք ՄԱԿ-ի մշակույթի իրավունքի գծով հատուկ զեկուցողի վերջին 15 տարիներին հրապարակած զեկույցների և ոլորտի փաստաթղթերի ուսումնասիրության վրա: Մեր ուշադրությունից չեն վրիպել նաև խնդրո առարկա դատական որոշումները, դրանց նախադեպերը, ինչպես նաև միջազգային միջամտությունների ուսումնասիրությունը համանման իրավիճակներում:

Դաշտային աշխատանքները ներառել են Արցախի հուշարձանների ոչնչացման դեպքերի ուսումնասիրման մոնիտորինգը. օգտագործվել են Հ. Պետրոսյանի ղեկավարած «Արցախի մշակութային ժառանգություն մշտադիտարկում» և «Կովկասի ժառանգության մշտադիտարկում» ծրագրերով իրականացված մոնիտորինգի տվյալները: Բացի այդ, Արցախի հուշարձանների հետ մարդկանց կապը և դրանց կորստի հետևանքով առաջացած խնդիրների ուսումնասիրության և ոչ նյութական ժառանգության փաստագրման համար իրականացվել են շուրջ 120 անհատական խորացված և 8 ֆոկուս-խմբային հարցազրույցներ՝ Արցախի Հադրութի և Շուշիի շրջաններից դեռևս 2020 թվականին բռնի տեղահանված, ՀՀ Սյունիքի, Վայոց ձորի, Կոտայքի մարզերում և Երևանում ժամանակավորապես բնակվող

արցախահայերի հետ: Ուսումնասիրության հիմքում նաև ՀՀ-ում ոլորտի պատասխանատու պետական գերատեսչություններից ստացված տվյալներն են, արցախահայերի իրավունքների պաշտպանությանը միտված ՀԿ-ների և մշակութային ինստիտուցիոնալ ներկայացուցչությունների հետ համագործակցությունը:

Աշխատանքի գործնական նշանակությունը: Հետազոտության գործնական նշանակության հիմնական ոլորտները ներառում են՝

- Արցախի մշակութային ժառանգությանը հասցված վնասի և առանձին դեպքերի ներկայացումը՝ ստեղծելով դասակարգված տեղեկություն՝ ժառանգության ոլորտի մասնագետների և ոլորտում ներգրավված կազմակերպությունների համար,
- կրթական ուղղությունը, քանի որ մշակութային ժառանգության պահպանության արդի հայեցակարգերը ուսումնական ռեսուրս են ժառանգության ոլորտի մասնագետների, ուսանողների և մասնագիտական ավելի լայն հանրության համար,
- գործնական առաջարկությունները միջազգային և ժառանգության ոլորտի ազգային կազմակերպություններին՝ մշակելու և իրականացնելու Արցախի ժառանգության պաշտպանության ռազմավարություններ, Ադրբեջանի կողմից ժառանգության ոչնչացման քաղաքականությանն առնչվող միջազգային դատական գործընթացներին տրամադրելով ապացույցներ և փորձագիտական վերլուծություններ:

Թեմայի ուսումնասիրվածությունը: Զինված բախումների ընթացքում մշակութային ժառանգության պահպանության խնդիրն ուսումնասիրվել է Լ. Մեսկելի «Ապագան՝ ավերակների վրա. ՅՈՒՆԵՍՕ, Համաշխարհային ժառանգություն և խաղաղության երազանքը» աշխատությունում, որտեղ մեզ համար կարևոր է եղել ուսումնասիրել, թե ինչպես են պատերազմներն ու հակամարտությունները ազդում մշակութային ժառանգության վրա և թե ինչպես է հեղինակը գնահատել ՅՈՒՆԵՍԿՕ-ի դերն այդ հարցում: Լ. Սմիթի «Ժառանգության օգտագործումը» գիրքը, որը կարևոր է եղել ժառանգության տեսական գնահատման համար, վերանայում է ժառանգության ավանդական ընկալումները՝ առաջարկելով այն դիտարկել որպես մշակութային պրակտիկա: Սմիթը քննադատում է ժառանգության այն սահմանումները, որոնք կենտրոնանում են միայն նյութական արժեքների վրա՝ պնդելով, որ ժառանգության նշանակությունը պայմանավորված չէ միայն ֆիզիկական արժեքներով, այլ այն օգտագործվում է տարբեր համայնքների առանձնահատկությունը ներկայացնելու համար: Հատկապես կարևոր է եղել Օ. Քոֆիի, Ս. Պերոնի և մյուսների հեղինակած՝ «Մշակութային ժառանգության պաշտպանությունը ռազմական ձեռնարկ»-ը, որը ՅՈՒՆԵՍԿՕ-ի հրատարակած կոլեկտիվ մենագրություն է և կենտրոնանում է մշակութային ժառանգության պաշտպանության վրա հակամարտությունների և ռազմական գործողությունների ժամանակ՝ ներկայացնելով ռազմավարություններ և ուղեցույցներ՝ կանխելու մշակութային արժեքների վնասը կամ ոչնչացումը պատերազմի ընթացքում՝ ընդգրկելով միջազգային իրավական շրջանակների ուսումնասիրությունները: Կ. Հաուլերի «Մշակույթը կրակի տակ. զինված ոչ պետական դերակատարները պատերազմի ժամանակ» Ժնևի կոնվենցիայից բխող աշխատությունը մեզ համար կարևոր էր զինված հակամարտության ընթացքում էթնիկ խմբերի մշակութային արժեքներին հասցված վնասի գնահատման և էթնիկ հանրույթների ժառանգության պաշտպանության

մեխանիզմների ուսումնասիրության տեսանկյունից՝ միջազգային իրավունքի և Ժնևի կոնվենցիաների շրջանակներում: Ջ.Մ. Հենկերտսի «Զինված հակամարտությունների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության նոր կանոններ. Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին 1954 թվականի Հաագայի կոնվենցիայի երկրորդ արձանագրության նշանակությունը. միջազգային ակնարկ» ձեռնարկում Հենկերտսը վերլուծում է 1999 թվականին ընդունված 1954 թվականի Հաագայի կոնվենցիայի երկրորդ արձանագրությունը, վերջինիս նոր մեխանիզմներն ուսումնասիրելու նպատակով, որտեղ մի շարք դրույթներ առանձնահատուկ կերպով են աղերսվում Արցախի մշակութային ժառանգության պաշտպանության խնդրին:

Մեզ համար կարևոր է եղել Հ. Պետրոսյանի և Հ. Մուրադյանի «Արցախի մշակութային ժառանգությունը հարձակումների թիրախում» գրքի ուսումնասիրությունը, որը մանրամասն ուսումնասիրում է Արցախի հայկական մշակութային ժառանգության դեմ ուղղված Ադրբեջանի հարձակումները, հատկապես 2020 թվականի 44-օրյա պատերազմի ընթացքում և դրանից հետո: Գրքում ներկայացված են փաստեր և վերլուծություններ՝ կապված հայկական մշակութային արժեքների ոչնչացման, պղծման և յուրացման դեպքերի և միջազգային իրավունքի շրջանակներում ժառանգության պաշտպանության խնդիրների հետ: Թեման ուսումնասիրվել է նաև Ի. Դոֆմանի և Հ. Խաչատուրյանի խմբագրմամբ՝ «Հուշարձաններն ու ինքնությունները Կովկասում. Ղարաբաղը, Նախիջևանը և Ադրբեջանը ժամանակակից աշխարհաքաղաքական հակամարտությունում» կոլեկտիվ մենագրությունում, որտեղ ներկայացված են տարբեր հեղինակների վերլուծություններ այն մասին, թե ինչպես են հուշարձանները և մշակութային ժառանգությունը ազդում ազգային ինքնության ձևավորման, քաղաքականության և հակամարտությունների վրա՝ հաշվի առնելով տարածաշրջանի բարդ պատմական և քաղաքական իրավիճակը:

Արցախի հուշարձանների ոչնչացման Ադրեջանի քաղաքականության ուսումնասիրության տեսանկյունից առանցքային են եղել նաև Ս. Մաղաքյանի «Մշակութային պղծումը ռասայական խտրականություն է, Արդարադատության միջազգային դատարանի վերջին որոշումը՝ կապված Ադրբեջանի գործողությունների հետ Լեռնային Ղարաբաղում», Ե. Համբարձումյանի «Ինչո՞ւ է հայկական մշակութային ժառանգությունը սպառնում Լեռնային Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանի պահանջներին», Լ. Խաչատուրյանի և Ա.Սմիթի «Ինչպե՞ս ԱՄՆ-ը կարող է կանխել Լեռնային Ղարաբաղի մշակութային արժեքների ոչնչացումը», Ք.Մարանչիի «Մշակութային ժառանգությունը ևս մեկ անգամ խաչմերուկում. Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտությունը անփոխարինելի գանձեր է թողնում վնասի ճանապարհին» հոդվածները: Թեման քննվել է նաև ՄԱԿ-ի, ՀՀ-ի, Արցախի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի, Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում նախաձեռնության, Կովկասի ժառանգության մշտադիտարկում կենտրոնի զեկույցներում, և այլ փաստաթղթերում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով (16), եզրակա-

ցություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Հավելվածում ներկայացված է բռնի տեղահանված արցախահայերի հետ անցկացված հարցազրույցների հարցաթերթի օրինակ: Ատենախոսության ընդհանուր ծավալը 201 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ ներկայացվում են հետազոտության նպատակներն ու խնդիրները, հիմնավորվում է ատենախոսության արդիականությունը, գիտական նորույթը, ներկայացվում տեսական հիմքն ու մեթոդաբանությունը, աշխատանքի գործնական նշանակությունը, վերլուծվում է օգտագործված հիմնական գրականությունը:

Առաջին՝ «Մշակութային ժառանգության պահպանման տեսական հիմքերը և Արցախի ժառանգության ոչնչացումն Ադրբեջանի կողմից» գլխում մշակութային ժառանգության պահպանման տեսական հիմքերի ֆոնին մատնանշվում են Արցախի ժառանգության ներկայիս խնդիրները: Ներկայացվում է Ադրբեջանի կողմից Արցախի մշակութային (նյութական և ոչ նյութական) ժառանգության ոչնչացման քաղաքականությունը, մեխանիզմները: Փաստագրվում են ոչնչացված արժեքները, դասակարգվում դրանք ըստ բնույթի և տեսակի, առանձնացվում են արցախահայերի փառատոները, ծեսերը, խոհանոցային փորձառությունը, արհեստները և այլն:

Երկրորդ՝ «Արցախի մշակութային ժառանգության պաշտպանության մեխանիզմները միջազգային համակարգում» գլուխը ներկայացնում է ժառանգության պահպանության և պաշտպանության միջազգային համակարգը, տեսական և կոնվենցիոնալ մոտեցումները: Քննվում են մշակութային նյութական և ոչ նյութական ժառանգության պաշտպանության կանոնակարգերը զինված բախումների, խաղաղ ժամանակ և բռնազավթված տարածքներում: Այն ներկայացնում է ժառանգության լայն հայեցակարգը, ինչպես նաև այդ հայեցակարգից բխող՝ ժառանգության պահպանության 21-րդ դարի սկզբունքները (իսկություն, ամբողջականություն, բացառիկություն, մշակութային կարևորություն):

Երրորդ գլխում՝ «Արցախի ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության միջազգային համակարգը ժառանգության լայն հայեցակարգի, պահպանման սկզբունքների և մշակույթի իրավունքի համատեքստում», քննվում են մշակութային ժառանգության և մշակույթի իրավունքի փոխառնչությունները, մշակույթի իրավունքի կոնցեպտը, մշակութային կյանքին մասնակցության պայմանները, ինչպես նաև դրանց բազմավեկտոր խախտումներն Ադրբեջանի կողմից զինված բախումների, ժառանգության ոչնչացման, տեղահանության արդյունքում:

Չորրորդ՝ «Միջազգային հանրության անհամաչափ արձագանքը՝ Ադրբեջանի կողմից Արցախի մշակութային ժառանգության ոչնչացմանը» գլխում քննվում են Ադրբեջանի կողմից մշակութային արժեքների ոչնչացման խախտումները ժառանգության պաշտպանության միջազգային սկզբունքների, կոնվենցիաների, կանոնակարգերի և դատական կանոնադրությունների տեսանկյունից, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների արձագանքն ու կատարված քայլերը 2020 թվականի 44-օրյա պատերազմից մինչև մեր օրերը: Տրվում են Ադրբեջանի քաղաքականության դատա-

պարտմանն ուղղված միջազգային պատասխանատու կառույցների որոշումներն ու բանաձևերը և ընդգծում միջազգային հրատապ միջոցներ ձեռնակելու անհրաժեշտությունը:

Եզրակացության մեջ ի մի են բերվում 4 գլուխներում կատարված վերլուծությունները և ներկայացվում են առաջարկություններ: Հավելվածում ներկայացված է դաշտային աշխատանքի հարցաթերթի մեկ օրինակ:

Ուսումնասիրելով մշակութային ժառանգության պահպանության տեսական մոտեցումները, միջազգային փորձը և Արցախի մշակութային ժառանգության պաշտպանության խնդիրները՝ մենք հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Միջազգային կանոնակարգերի մշակութապահպան դրույթների համաձայն Ադրբեջանը պարտավոր էր և է հարգել ցանկացած մշակութային արժեք՝ անկախ դրա ծագումից և նշանակությունից, քանզի, համաձայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի սկզբունքների, յուրաքանչյուր ժողովրդի մշակութային ժառանգությունն իր ներդրումն ունի համաշխարհային մշակութային բազմազանության մեջ, և յուրաքանչյուր ժողովրդի ստեղծած ժառանգությունը տվյալ համայնքի եզակի փորձառության արդյունքն է:

Արցախի մշակութային նյութական և ոչ նյութական ժառանգությունը միջազգային կանոնակարգերով ունի պաշտպանության լիարժեք իրավունք և բոլոր երաշխիքները, որոնք պարտադիր են բոլոր պետությունների՝ ներառյալ Ադրբեջանի համար:

Արցախի Հանրապետության՝ ՄԱԿ-ի կողմից որպես անկախ պետություն ճանաչված չլինելու և հետևաբար ՅՈՒՆԵՍԿՕ-ի և ոլորտի այլ կոնվենցիաներին կողմ չհանդիսանալու փաստը պատնեշ չէ ժառանգության պաշտպանությանը, նախ որովհետև հակամարտության ընթացքում և տարածքների բռնազավթման արդյունքում Ադրբեջանը կողմ լինելով Հաագայի և ժնևի կոնվենցիաներին և լրացուցիչ արձանագրություններին պարտավորվում է չվնասել, չթիրախավորել, հաշվեհարդարի առարկա չդարձնել թե՛ իր և թե՛ այլ պետության տարածքի, կամ այլ խմբին պատկանող մշակութային ժառանգությունը: Երկրորդ՝ համանման իրավիճակներում՝ ներառյալ Արցախի դեպքում գործում են միջազգային սովորութային նորմերը և Միջազգային հումանիտար իրավունքը, որոնք կարող են ժառանգությունը պաշտպանել առանց նախապայմանների:

2. Միջազգային շատ փաստաթղթեր իրենց ամենատարբեր դրույթներով հաստատում են ժառանգությունն անխաթար պահպանելու անհրաժեշտությունը և այն նույնիսկ աննշան փոփոխության ենթարկելու, վնասելու և յուրացման արգելքներն ու նշում դրանց ծանր հետևանքները: Դրանց հիմքով Ադրբեջանը պարտավոր է ապահովել Արցախի ժառանգության՝ սերունդներին անխաթար, առանց խեղաթյուրման փոխանցման հնարավորությունը: ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ընդունված մշակութային արժեքների իսկության, ամբողջականության, մշակութային կարևորության և բացառիկության սկզբունքների քննությունը հաստատագրեց, որ հուշարձանի անխաթարության, անձեռնմխելիության պահպանությունը, իրական պատմության և գիտելիքի պահպանումն ու սերուդներին փոխանցումը խիստ կարևոր են ժառանգության պահպանության միջազգային սկզբունքների հարգման տեսանկյունից:

3. Տեսական մակարդակում միջազգային կառույցները վերջին 2 տասնամյակների ընթացքում մշակութային ժառանգության պահպանության միջազգային հայեցակարգը ընկալում և տարբեր միջազգային փաստաթղթերում և օրենքներում արդեն իսկ կիրառում են ժառանգության լայն հայեցակարգին համապատասխան՝ ներառելով պահպանության համակարգում թե՛ նյութական, թե՛ ոչ նյութական ժառանգությունը, այն արժևորող մարդկանց և բնական լանդշաֆտը, բայց այնուամենայնիվ այդ նույն քաղաքականությունը դեռ չի տեղափոխվել զինված բախումների դեպքում մշակութային արժեքների պաշտպանության համակարգ կոնվենցիաների ու պայմանագրերի տեսքով՝ զգալիորեն թուլացնելով հակամարտությունների ընթացքում մշակութային արժեքների միջազգային պաշտպանությունը:

4. Ադրբեջանի կողմից Արցախի հուշարձաններին հասցված վնասը, հուշարձանի նյութական կորստից զատ մեծ հետք է թողնում նաև հայկական եկեղեցիների, պատմական գերեզմանոցների ու խաչքարերի հետ կապված ոչ նյութական տարրերի՝ մշակութային պրակտիկաների ամենատարբեր ձևերի, կրոնական սովորույթների, ծիսակարգերի, պատմության և հիշողության վրա. նյութական և ոչ նյութական արժեքները կապված են միմյանց հետ և ժառանգության նյութական ասպեկտներին հասցված վնասը շարունակական ազդեցություն է թողնում ոչ նյութական բաղադրիչի վրա: Բայց հուշարձանի կորստի հետ կապված ոչ նյութական կորստի ձևերը դեռևս հստակորեն չեն արտացոլվել միջազգային օրենքներում և էականորեն խաթարում են տեսություն-օրենքներ-իրական քաղաքականություն օրգանական կապը:

5. Ժառանգության լայն հայեցակարգի տեսական շրջանակում քննելով խնդիրը մենք պարզեցինք, որ թեև առկա բազմաթիվ կանոնակարգերին, ոլորտի միջազգային օրենքները, այնուամանիվ, դեռ չեն արձագանքում ժառանգության պաշտպանությանը՝ լայն հայեցակարգի բոլոր բաղադրիչների շրջանակում: Ու թեև հռչակագրերի մակարդակով ներկայացնում են ժառանգության երկու ձևերի պաշտպանության կարևորությունը, բայց կոնվենցիոնալ մակարդակով չեն արձագանքում դատապարտմանն և պատժամիջոցներին, քանզի ոլորտի հիմնական կոնվենցիաները պաշտպանություն են տրամադրում գերազանցապես Հաագայի «Զինված բախումների դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» 1954 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածով սահմանված «մշակութային արժեք»-ի սահմանմանը բավարարող արժեքներին, իսկ ոչ նյութական ժառանգության պաշտպանությունը պատերազմների ժամանակ դեռևս խնդրահարույց է: Քննելով պատերազմի ժամանակ Արցախի ոչ նյութական մշակութային ժառանգության իրավական պաշտպանության համակարգը՝ բացահայտված համակարգային խնդիրների շարքում նախ և առաջ մենք առանձնացրինք զինված հակամարտության ժամանակ ոչ նյութական մշակութային արժեքների պաշտպանության թերի համակարգը, վերջինիս պաշտպանությանն անուղղակի մոտեցումը կամ պաշտպանությունը՝ նյութականի հետ ենթադրվելիք միասնության շրջանակներում:

6. Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանությունը բախումների ժամանակ պետք է դիտարկել ոչ միայն նյութական արժեքների պաշտպանության տիրույթում, այլև դրանք կրող համայնքների ու խմբերի էթնոմշակութային ինքնության պահպանման, սեփական համայնքային կյանքն իրենց պատկերացումներին համա-

պատասխան ապրելու կոնտեքստում: Վերջապես, հենց այս կիզակետում է ի հայտ գալիս մեր հիմնական գաղափարական հենքը, համաձայն որի՝ Ադրբեջանի կողմից Արցախի մշակութային ժառանգության պաշտպանության խաթարումը խախտում է նաև արցախահայության մշակութային հիմնարար իրավունքները: Այսինքն, խախտելով մշակութային արժեքների անձեռնմխելիության կանոնը, էական վնաս է հասցվում տվյալ ժառանգությունն իր կենսընթացի մաս համարող, դրանով ապրող ու զարգացող արցախցու ներկային ու ապագային՝ ոտնահարելով ժառանգության ստեղծած բարիքները վայելելու իրավունքը: Ուստի՝ հետազոտության ծիրում մենք բացահայտեցինք այն խաչմերուկը, որտեղ ոչ նյութական ժառանգությունը, սերտորեն կապվելով մարդու մշակութային իրավունքների հետ, ունակ է դառնալու համայնքի անդամների մշակութային իրավունքի հարց՝ մարդու իրավունքների միջազգային համակարգում պաշտպանության փնտրտուքների խիստ անհրաժեշտությամբ:

7. Արդարադատության միջազգային դատարանը և Նյուրնբերգի միջազգային տրիբունալները ընդունել են մի շարք որոշումներ, համաձայն որոնց՝ մարդու իրավունքները, զինված բախումների ժամանակ ժառանգության պաշտպանության և անձեռնմխելիության կանոններն ունեն սովորութային իրավունքի կարգավիճակ, ուստի կիրառելի և պարտադիր են միջազգային հանրության բոլոր կողմերի համար:

Միջազգային սովորութային իրավունքը, որի հիմքը նաև ոլորտի գլխավոր՝ Հաագայի 1954 թ. և Ժնևի 1949 թ. կոնվենցիաներն ու արձանագրություններն են, ժառանգության հարգման իրավունքն ազատում են տարածքային պատկանելության և ազգային պետության հռչակման հանգամանքներից՝ ժառանգության անձեռնմխելիության կանոնն ամրագրելով որպես ժողովրդի ինքնորոշման իրավունքից բխող ֆունդամենտալ իրավունք: Այսինքն՝ միջազգային սովորութային իրավունքը թույլ է տալիս պատերազմի ժամանակ մշակութային ժառանգության անձեռնմխելիության կանոնը պարտադիր դարձնել նաև կոնվենցիային չանդամակցող պետությունների համար:

8. Մշակույթի իրավունքի երաշխավորման միջազգային սկզբունքների համաձայն Ադրբեջանը պարտավոր էր և է երաշխավորել արցախահայերի՝ իրենց մշակութային կյանքին ազատ մասնակցելու իրավունքը՝ մշակութային ժառանգության տարածքներ անարգել մուտք գործելու և այն վայելելու, մտքի, խղճի, դավանանքի, ստեղծագործական ազատության իրավունքների իրացումը և այլն: Քանզի միջազգային կանոնակարգերի համաձայն՝ արցախահայերն ունեն իրենց մշակութային ավանդույթներին և սովորույթներին համապատասխան ապրելու հիմնարար իրավունք, իրենց մշակութային անցյալը, հնագիտական և պատմական վայրերը, արհեստագործությունը, ծեսերը պահպանելու և կիրառելու իրավունք: Ուստի, մենք պարզեցինք, որ դեպի Արցախի կարևոր նշանակության հուշարձաններ, եկեղեցիներ միջազգային երաշխավորությամբ մուտքի իրավունքը պետք է մաս կազմի խաղաղության պայմանագրի և դառնա միջազգային իրավական և դիվանագիտական հստակ օրակարգ:

9. Ադրբեջանի կողմից Արցախի մշակութային ժառանգության ոչնչացման քաղաքականությունը համակարգված է, ունի հստակ ուղղություններ և գործադրման մեխանիզմներ (ժառանգության ոչնչացում, յուրացում, գործառույթի փոփոխում, աղվանացում, ադրբեջանականացում, թյուրքացում, պղծում, կողոպուտ, վանդալիզմ, ռազ-

մական նպատակներով օգտագործում) որոնք ուղղված են տարածաշրջանում Արցախի ժողովրդի բազմադարյա ներկայության գոյության ապացույցների ջնջմանը և հայկական պատմական հետքից զրկված տարածքում ադրբեջանական նոր ինքնության ձևավորմանը: Ադրբեջանի այս քաղաքականությունն իրականացվում է միջազգայնորեն՝ ներգրավելով զգալի մասնագիտական և ֆինանսական ռեսուրսներ:

10. Ադրբեջանի կողմից Արցախի մշակութային ժառանգության ոչնչացման համակարգային քաղաքականությունը՝ ներառյալ եկեղեցիների, խաչքարերի, պատմական գերեզմանոցների, թաղամասերի ու գյուղերի հիմնահատակ ավերումները, Արցախյան ազատամարտին, վերջինիս հերոսներին, Հայոց Ցեղասպանությանը, Հայրենական մեծ պատերազմին, գրական, թատերական, երաժշտական կյանքի ակնառու գործիչներին նվիրված հուշարձանների, թանգարանների, հավաքածուների և այլ արժեքների ոչնչացումները և այլ գործողություններ ոչ միայն վնասում են ժառանգությանը ֆիզիկապես, այլև բացասական ազդեցություն ունենում մարդկանց և նրանց իրավունքների իրացման վրա: Իսկ միջնադարյան հայկական եկեղեցիների յուրացումը, պղծումն ու գործառույթի փոփոխումը, դրանք այլ հանրույթներին վերագրելը՝ աղվանացնելը, իսլամացնելը, անօրինական վերականգնումներն ու վերափոխումները ոչ միայն կեղծում են պատմությունը և դրանով ժխտում Արցախի պատմական հայկական արմատները, այլև խաթարում՝ այդ արժեքները իսկության ասպեկտներով հաջորդ սերունդներին փոխանցելու հնարավորությունը:

11. Ադրբեջանի կողմից բռնի տեղահանությամբ պատմական ժառանգության հետ հաղորդակցման արգելումը, դրանով զարգանալու հնարավորության կասեցումը մարդու մշակութային իրավունքների կոպիտ խախտումներ են: Այսօր շուրջ 120.000 արցախահայ զրկված է իր մշակութային բնականոն համայնքային կյանքին մասնակցելու, իր ժառանգության տարածքներ, հարազատի գերեզմանոց այցելելու իրավունքից, պատմական եկեղեցիներում ծեսեր իրականացնելու և աղոթելու հնարավորությունից: Բռնի տեղահանության պատճառով արցախահայերը մինչ օրս զրկված են իրենց փորձառության, հմտությունների, պատկերացումների արդյունքում ստեղծված ժառանգությանը հասանելիություն ունենալու և դրանով զարգանալու հնարավորությունից, որը մասնագետների կարծիքով երկարաժամկետ հեռանկարում կարող է ոչնչացնել ամբողջական մշակութային համայնքները՝ աշխարհից սրբելով գոյության անխախտ իրավունք ունեցող ժողովրդի հավաքական ինքնությունը: Արցախահայերը՝ բախվելով մարդու հիմնարար իրավունքների իրացման բազմաթիվ խոչընդոտների, այսօր գտնվում են հոգեսոցիալական ծանր պայմաններում, ինքնության կազմաքանդման վտանգի առջև:

12. Արցախի մշակութային ժառանգության ոչնչացման և բռնի տեղահանման հետևանքով առաջացած մարտահրավերների լուծումն այսօր պահանջում է միջազգային ուշադրություն՝ ներառյալ մշակութային իրավունքների հարգում, ժառանգության փաստագրում, վնասի կանխարգելում, ինչպես նաև տեղահանված համայնքներին ժառանգության տարածքներ մուտքի երաշխավորություն:

13. Արցախի հայկական շուրջ 4000-ից ավելի մշակութային արժեքները ներկայումս կանգնած են Ադրբեջանի կողմից ժառանգության շարունակական ոչնչաց-

ման, պատմական փաստերի յուրացման, կեղծման մարտահրավերների առջև: Ադրբեջանի կողմից մշակութային ցեղասպանության բազմաթիվ դրսևորումները, արցախահայության ժառանգության հանդեպ բացահայտ անհանդուրժողականությունը, հայերի բնիկության փաստերի ժխտումը, ողջ մշակութային ժառանգությունը ոչ հայկական հռչակելն իրական սպառնալիք են ոչ միայն պատմամշակութային հուշարձանների պահպանությանը, այլև այդ արժեքները կրող համայնքների գոյության, ինքնության և շարունակականության համար:

14. Արցախի մշակութային ժառանգությունը համաշխարհային ժառանգության մի մասն է, որի ոչնչացումն աղքատացնում է մոլորակի մշակութային բազմազանությունը, հարվածում հանդուրժողակության և բազմամշակութայնության սկզբունքներին: Այս արժեքների պաշտպանությունը ոչ միայն կարևոր է հայ ժողովրդի համար, այլև անհրաժեշտություն ժողովրդավարության և կայուն խաղաղության համար:

15. 2020 թ. սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 9-ն ընկած ժամանակահատվածում (նաև պատերազմից առաջ) միջազգային հանրությունը համապատասխան գնահատական չի տվել Ադրբեջանի հստակ ընդգծված մշակութասպան քաղաքականության ակնհայտ դրսևորումներին և բավարարվել է երկու կողմերին ուղղված զսպվածության, ուժի կիրառումից զերծ մնալու հորդորներով և վանդալիզմն ընդհանուր կերպով դատապարտող կոչերով: Սակայն պատերազմից հետո միջազգային գլոբալ անկայունության պայմաններում Եվրոպայի խորհրդարանի մի շարք բանաձևերով և ՄԱԿ-ի Հաագայի արդարադատության միջազգային դատարանի ընդունած որոշումներով ուրվագծվեց Ադրբեջանի գործողությունների դատապարտման և դրանց համապատասխան գնահատականներ տալու նոր հեռանկար: Ավելի կոնկրետ՝ պատերազմից գրեթե մեկ տարի անց միջազգային բարձր ատյաններից հնչող հայտարարություններն արդեն իսկ դատապարտում էին ադրբեջանական հայատյացության քաղաքականությունը՝ 44-օրյա պատերազմում հայկական մշակութային ժառանգության ոչնչացման գործողությունները համարելով ոչ թե առանձին դեպքեր, այլ դեռևս նախորդ դարում սկզբնավորված, 1997-2006 թթ. Նախիջևանում և վերջին 30 տարվա ընթացքում ԼՂՀ տարբեր շրջաններում «հաջողությամբ» իրականացված մեկ միասնական քաղաքականության ու շղթայի բաղկացուցիչ մասեր: Հայատյացությունն առաջին անգամ միջազգայնորեն համարվեց 100-ամյա պատմությամբ քաղաքականություն, ցեղասպանություն, խաղաղության օրակարգի չեզոքացում, բազմամշակութայնության խաթարում և համամարդկային արժեքներին հասցված ծանր հարված: Այս ընթացքում իրականության մեջ առաջին անգամ առերեսվեցինք երևույթների՝ հայտնի չափով ճշմարտությանը մոտ գնահատականների, արցախահայության մշակութային իրավունքների պաշտպանության համար մտահոգությունների աճին, և դա անվանեցինք միջազգային հանրության արձագանքի դրական փոփոխության նոր փուլ: Իսկ 2023 թվականի Արցախի բռնի տեղահանությունից հետո, երբ 120.000 արցախահայեր զրկվեցին իրենց հայրենիքից, և մշակութային արժեքների հետ հաղորդակցման հնարավորությունից, տարբեր եկեղեցիների ու գերեզմանոցների հիմնահատակ ավերումների հետ կապված միջազգային հանրությունը կրկին լուռ մնաց: Բացառությամբ մի քանի ընդհանրական ձևակերպումների, միջազգային հանրության որոշումների կիրառման կոնկրետ մեխա-

նիզմների բացակայությունը շարունակում է թույլ տալ Ադրբեջանին անտեսել միջազգային որոշումները և շարունակել իր ապակառուցողական քաղաքականությունը: Արցախի հարուստ և եզակի մշակութային ժառանգությունը վտանգի տակ է, ժառանգության միջազգային փաստագրումն ու ՅՈՒՆԵՍԿՕ-ի առաքելության ուղարկումը մինչ օրս չեն իրականացվել, ժառանգության կորուստը չի դադարել, իսկ Ադրբեջանը դեռևս չի դատապարտվել: Մշակույթի իրավունքը կարող է պաշտպանել արցախահայերի՝ իրենց համոզմունքներով ապրելու և զարգանալու, մշակութային ժառանգությունից օգտվելու հնարավորությունները, բայց իրականության տիրույթում մենք ականատես ենք, որ Ադրբեջանի հակահայ քաղաքականությունը, թույլ չի տալիս իրացնել այս հիմնարար իրավունքը:

16. Մշակութային ժառանգությունը կարևոր է ցանկացած ժողովրդի ինքնության և շարունակականության համար, որի պահպանումը մի քանի դար է, ինչ միջազգային հանրության ուշադրության կենտրոնում է: Ու թեպետ մշակութային ոչնչացման կանխարգելման խնդիրները լայնորեն քննարկվել են տեսական, քաղաքական, իրավական ու միջազգային ասպարեզներում, թեև օրենքներ ու կոնվենցիաներ են ստեղծել, բայց մի կողմից՝ ոլորտի բացերը, իսկ մյուս կողմից՝ միջազգային արդյունավետ գործիքակազմի բացակայությունը առիթ են տվել Ադրբեջանին՝ չհարգելու այդ կանոնները: Ներկա քննությունը բացահայտեց, որ թեև ժառանգության միտումնավոր ոչնչացման դեմ պայքարի միջազգային կանոնակարգերը բազմաթիվ են, այնուամենայնիվ դրանք արդյունավետ չեն գործում և չեն կարողանում կասեցնել Արցախի ժառանգությունը շարունակական ոչնչացումը: Այն նաև քննեց, որ թեև պատերազմից ի վեր միջազգային ամենատարբեր դերակատարներ բանաձևերի, հայտարարությունների, հռչակագրերի միջոցով հորդորել են զերծ մնալ ժառանգության ոչնչացման գործողություններից, այնուամենայնիվ չեն կարողացել զսպել Ադրբեջանի գործողությունները:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

Մենագրություններ

1. **Տիգրանյան Ա.**, Արցախի հայկական մշակութային ժառանգությունը. պաշտպանության մեխանիզմները՝ ժառանգության պահպանության միջազգային համակարգում, «Վէմ» մատենաշար, թիվ 7, «Լուսակն», Երևան, 2023, 287 էջ:

2. **Tigranyan A.**, The Armenian cultural heritage of Artsakh. Mechanisms for protection in the international system for preservation of heritage, "Vem series", No 6, Lusakn, Yerevan, 2023, p. 216.

3. **Տիգրանյան Ա.**, Արցախի քրիստոնեական ժառանգության ոչնչացման և բռնյուրացման ադրբեջանական քաղաքականությունը, մենագրություն, «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին հրատ.», Էջմիածին, 2023, 168 էջ:

Հոդվածներ

1. **Տիգրանյան Ա.**, Մշակութային ժառանգության նոր հայեցակարգը, ժառանգության իրավունքի միջազգային սկզբունքները և ՀՀ օրենսդրական դաշտը», «Տարածաշրջան և աշխարհ», Երևան, 2020, թ. 4, էջ 84-103:

2. **Տիգրանյան Ա.**, Արցախահայության ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մեխանիզմները արդի միջազգային-իրավական համակարգում, «Վէմ համահայկական հանդես», Երևան, 2021, թ. 1 (73), էջ 204-225:

3. **Տիգրանյան Ա.**, Արցախահայության նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մեխանիզմները արդի միջազգային-իրավական համակարգում, «Վէմ համահայկական հանդես», Երևան, 2021, թ. 3 (75), էջ 163-202:

4. **Տիգրանյան Ա.**, Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցու թիրախավորման դեպքի քննություն՝ պատերազմի ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության միջազգային սկզբունքների դիտանկյունից, «Վէմ համահայկական հանդես», 2022, թ. 2 (78), էջ 224-250:

5. **Tigranyan A.**, Azerbaijan's Policy Regarding Misappropriation of Armenian Cultural Heritage in the Light of International Principles (Authenticity, Integrity, Cultural Significance, Outstanding Universal Value) of Heritage Protection, «Պատմություն և մշակույթ», Երևան, ԵՊՀ հրատ., 2022, թ. 2 (18), էջ 175-191:

6. **H. Petrosyan, A. Leyloyan-Yekmalyan, H. Muradyan and A.Tigranyan,** "Azerbaijan's Policy of Extortion and Destruction of Armenian Cultural Heritage in Arts akh", Monuments and Identities in the Caucasus Karabagh, Nakhichevan and Azerbaijan in Contemporary Geopolitical Conflict, Brill, leiden, Boston, "Koninklijke Brill nv, Leiden", The Netherlands, 2023, pp. 391-408.

7. **Տիգրանյան Ա.**, Արցախահայերի մշակութային ժառանգության ոչնչացումն ու բռնի տեղահանումը՝ մարդկության դեմ ծանր հանցագործությունների համա-տեքստում, "Analytical Bulletin", (CCCS), Երևան, 2024, թ. 18, էջ 107-160:

8. **Տիգրանյան Ա.**, Միջազգային հանրության անհամաչափ արձագանքը՝ Ադրբեջանի կողմից Արցախի մշակութային ժառանգության ոչնչաց-ման քաղաքականությանը, «Վէմ համահայկական հանդես», Երևան, 2024, թ. 3 (87), էջ 138-184:

9. **Տիգրանյան Ա.**, Հադրութից բռնի տեղահանված արցախահայերի ավանդական կենսընթացի խեղումները, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2024, թ. 3, էջ 228-245:

10. **Tigranyan A.,** The International Prohibitions on the Military Use of Artsakh's Cultural Property by Azerbaijan, «Բանբեր հայագիտական միջազգային հանդես», Երևան, 2024, թ. 3 (36), էջ 150-164:

11. **Տիգրանյան Ա.**, Միջազգային մարդասիրական իրավունքի խախտումներն Ադրբեջանի կողմից Արցախի մշակութային արժեքների ռազմականացման դեպքում, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի, 2024, թ. 2 (27), էջ 28-42:

ТИГРАНЯН АРМИНЕ АРУТЮНОВНА

СОХРАНЕНИЕ КУЛЬТУРНОГО НАСЛЕДИЯ ТЕОРЕТИЧЕСКИЕ ПОДХОДЫ, МЕЖДУНАРОДНЫЙ ОПЫТ И ПРОБЛЕМЫ ЗАЩИТЫ КУЛЬТУРНОГО НАСЛЕДИЯ АРЦАХА

РЕЗЮМЕ

Более 4 000 зарегистрированных памятников в Арцахе в основном отражают армянское христианское наследие с 4 по 19 века, что демонстрирует историческую и правовую связь региона. С 1918 года Азербайджан нарушает права армян Арцаха на сохранение своей идентичности путем этнических чисток, культурного геноцида и уничтожения армянских следов. Азербайджан начал целенаправленно разрушать культурное наследие Арцаха с начала войны 2020 года, и разрушения усилились после того, как регион оказался под контролем Азербайджана, с атаками на церкви, хачкары и памятники. После изгнания армянского населения в 2023 году Азербайджан продолжил свои атаки на наследие и усилия по культурной ассимиляции. Перемещение 120 000 армян разорвало их связь с наследием, что привело к утрате нематериальных культурных элементов. Цель этого исследования — документировать разрушения, оценить политику и искать международные меры защиты. Исследование подчеркивает важность сохранения культурных прав и наследия, выделяя неэффективность международных норм в предотвращении продолжающегося уничтожения.

Цель исследования: Целью данного исследования является изучение теоретических подходов к сохранению культурного наследия, опираясь на международный опыт (включая соответствующие конвенции, декларации, регламенты и решения международных институтов) для выявления текущих проблем сохранения культурного наследия Арцаха и поиска механизмов его защиты.

Задачи исследования

•Анализ принципов сохранения культурного наследия: подлинность, целостность, значимость и уникальность.

• Обзор международных актов по защите культурного наследия в различные периоды и на оккупированных территориях (конвенции ООН, ЮНЕСКО, Совета Европы).

• Изучение современных подходов к сохранению материального и нематериального культурного наследия, включая культурные права как основное право человека.

• Исследование уничтожения наследия Арцаха Азербайджаном и его воздействия на права армян.

• Документирование разрушений культурного наследия Арцаха и анализ целевых инцидентов.

• Оценка воздействия конфликта 2020-2023 годов и перемещения 120 000 армян на культурное наследие, разрушение традиций и доступ к памятникам.

• Выявление угроз для культурного наследия Арцаха: утрата нематериального наследия и прерывание передачи ценностей.
• Анализ глобальных последствий разрушений, вызванных конфликтом, и нарушение принципов защиты культурного наследия Азербайджаном.
• Оценка эффективности международных механизмов защиты культурного наследия и предложение гарантий для защиты культурных прав армян Арцаха.

Научная новизна исследования: Научная новизна данного исследования заключается в рассмотрении защиты культурного наследия Арцаха в рамках более широкого понятия культурного наследия, интегрируя право на культуру в процесс сохранения. Исследование подчеркивает не только охрану материальных памятников, но и продвижение прав человека в политике охраны наследия. Анализируя нарушения культурных прав, оно вносит новую перспективу в академическую дискуссию.
Исследование расширяет традиционный круг вопросов охраны культурного наследия, включая как материальные, так и нематериальные элементы, а также общинную культурную идентичность. Новым подходом является исследование культурного уничтожения, военных преступлений, этнических чисток и перемещения как взаимосвязанной системы. Документируется влияние принудительного переселения на нематериальное наследие, раскрывая связь утрат с разрушением идентичности. Также рассматриваются проблемы охраны наследия в условиях конфликта, связывая сохранение наследия с миротворческим процессом и продолжением разрушений.

Результаты исследования: Исследование подтверждает, что Азербайджан, как подписант Гаагской и Женевской конвенций, обязан защищать культурное наследие Арцаха, включая как материальные, так и нематериальные элементы, несмотря на отсутствие формального признания региона. Однако в международных конвенциях отсутствуют механизмы принуждения, что выявляет пробел в защите широкого понятия наследия. Систематическое разрушение культурных памятников Арцаха, в том числе осквернение и неправильная атрибуция армянских объектов, направлено на уничтожение армянской идентичности и установление новой азербайджанской. Это привело к перемещению около 120 000 армян, разорвавших связь с своим наследием. Принудительное переселение лишает армян культурных прав и угрожает их долгосрочной идентичности. Недостаточные международные реакции подчеркивают необходимость усиленной защиты и гарантий культурных прав армян Арцаха.

TIGRANYAN ARMINE HARUTYUN

PRESERVATION OF CULTURAL HERITAGE. THEORETICAL APPROACHES, INTERNATIONAL EXPERIENCE, AND PROBLEMS IN PROTECTING THE CULTURAL HERITAGE OF ARTSAKH

ABSTRACT

The over 4,000 registered monuments in Artsakh primarily reflect Armenian Christian heritage from the 4th to the 19th centuries, demonstrating the region's historical and legal connection. Since 1918, Azerbaijan has violated the rights of Artsakh's Armenians to preserve their identity through ethnic cleansing, cultural genocide, and the destruction of Armenian traces.

Azerbaijan began deliberately destroying Artsakh's cultural heritage at the start of the 2020 war, intensifying after the region fell under Azerbaijani control, with targeted attacks on churches, khachkars, and monuments. After the expulsion of the Armenian population in 2023, Azerbaijan continued its attacks on heritage and cultural assimilation efforts.

The displacement of 120,000 Armenians severed their connection to their heritage, resulting in the loss of intangible cultural elements. This study aims to document the destruction, assess policies, and seek international protection measures. It emphasizes the importance of safeguarding cultural rights and heritage, highlighting the failure of international regulations to prevent the ongoing destruction.

Research Objective: The objective of this study is to examine theoretical approaches to cultural heritage preservation, drawing on international experience (including relevant conventions, declarations, regulations, and decisions by international institutions) to identify current challenges in preserving Artsakh's cultural heritage and explore mechanisms for its protection.

Research Tasks: To achieve this objective, the study will address the following tasks:

• Analyze principles of cultural heritage preservation, including authenticity, integrity, and significance.

• Review international regulations for protecting cultural heritage in wartime, peacetime, and occupied territories, including UN, UNESCO, and humanitarian law.

• Examine contemporary approaches to safeguarding tangible and intangible heritage. • Integrate cultural rights into heritage preservation as a fundamental human right.

• Investigate Azerbaijan's destruction of Artsakh's heritage and its impact on the rights of Artsakh Armenians.

• Document and classify destruction of Artsakh's heritage, recording targeted incidents.

• Assess the impact of the 2020-2023 conflict and displacement of 120,000 Armenians on cultural heritage.

• Identify threats to Artsakh's heritage, including loss of intangible heritage and disruption of transmission processes.

• Examine how cultural rights can strengthen heritage preservation in Artsakh.

• Analyze global implications of destruction and Azerbaijan's violations of cultural heritage principles.

• Identify gaps in international heritage protection and assess response effectiveness.

• Propose international guarantees for protecting Artsakh's cultural heritage and the rights of Artsakh Armenians.

Scientific Novelty of the Research: This study's scientific novelty lies in its examination of Artsakh's cultural heritage protection within the broader framework of cultural heritage, integrating the right to culture into the preservation process. It emphasizes not only safeguarding tangible monuments but also promoting human rights in heritage protection policies. By analyzing the violations of cultural rights, this research presents a new perspective in the academic discourse, contributing to the system of protecting Artsakh's cultural heritage.

The research expands the traditional scope of cultural heritage studies by addressing both tangible and intangible elements, alongside the broader concept of communal cultural identity. It also introduces a novel approach by examining cultural destruction, war crimes, ethnic cleansing, and displacement as an interconnected system. The study documents the impact of forced displacement on Artsakh's intangible heritage, revealing how these cultural losses are linked to the destruction of identity. Additionally, this dissertation explores the challenges of protecting cultural heritage amid conflict, connecting heritage preservation with peacebuilding, and viewing ongoing destruction as an extension of conflict. Ultimately, this research contributes to the international discourse on cultural heritage protection.

Research Results: This study confirms that Azerbaijan is obligated under international law to protect Artsakh's cultural heritage, both tangible and intangible, despite Artsakh's lack of formal recognition. Azerbaijan, as a signatory to the Hague and Geneva Conventions, must protect cultural heritage in occupied territories.

The research highlights a gap in international mechanisms for protecting the broad concept of heritage, including intangible elements. While international declarations emphasize the importance of safeguarding heritage, conventions lack enforcement mechanisms.

Azerbaijan's systematic destruction of Artsakh's cultural heritage, including the desecration and misattribution of Armenian sites, aims to erase Armenian identity and impose a new Azerbaijani one. This has led to the displacement of approximately 120.000 Armenians, severing their connection to their heritage.

The forced displacement deprives Armenians of their cultural rights and threatens their long-term identity. Despite the ongoing destruction, international responses have been insufficient, highlighting the need for stronger protections and guarantees for Artsakh Armenians' cultural rights.